ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N N ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/4

ք.Մեղրի «22» սեպտեմբեր 2021թ.

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքը», ի դեմս Արարատ Թումանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ազատ Գասպարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մեղրի քաղաքում գտնվող կասկադի կապիտալ վերանորոգման** շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացույցային գրաֆիկի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

Сканировано с CamScanner

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Сканировано с CamScanner

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը հիմնավորող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները:Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **30240000 (Երեսուն միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից 5040000 (Հինգ միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:՝

Сканировано с CamScanner

Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն պահանջելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[31] Եթե պայմանագիրը կնքվել է ,Գնումների մասինե ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Сканировано с CamScanner

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

Сканировано с CamScanner

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մեղրիի համայնքապետարան	«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2	ՀՀ Սյունիքի մարզ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Ք.Մեղրի,Գործարանային 89
Հ/Հ 900302199014	Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Շենգավիթ մ/6
Հ/Հ 900302000238	Հ/Հ 2052122159381001
ՀՎՀՀ 09425378	ՀՎՀՀ 09700228
Համայնքի ղեկավար՝ Ա.Թումանյան	Տնօրեն՝ Ա.Գասպարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

[35] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Сканировано с CamScanner

Հավելված թիվ 1
«22» սեպտեմբերի 2021թ. Կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՍԿԱԴԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ »ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

հազ. դրամ

N	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Աշխատանքի միավորի ընդհանուր արժեքը	Աշխատանքի ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	46-106	Աստիճանավանդակների և պատերի ջարդված երեսապատված բազալտե սալիկների քանդում	քմ	28,8	0,520	14,976
2	46-83	Ոչ պիտանի բետոնե թասակների քանդում	խմ	15,6	22,650	353,340
3	33-53 Գաշխ=0,6 Գմեք=0,7	Լուսավորության մետաղական սյուների ապամոնտաժում Փ-114x4մմ 7 հատ	տ	0,190	75,500	14,336
1	46-83	Բետոնե պատի քանդում 300x600 մմ հատույթով	խմ	0,6	22,650	13,590
5	1-1594	Շինարարական աղբի բարձում ավտոմեքենաներին 0,5խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով	1000 խմ	0,0162	1021,000	16,540
6	C310-3	Շին աղբի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տն	29,2	1,650	48,180
					Ընդամենը	**460,962**
					Ընդամենը %	**1.83**
		Վերակառուցում				
1	3-100 վեր	Բազալտե թասակների տեղադրում (600x100մմ)	գծմ	260,0	45,250	11765,000
2	15-77	Աստիճանների երեսապատում բազալտե սալիկներով 350x50մմ-38,0գծմ,	քմ	13,3	21,100	280,630
3	15-77	Աստիճանաճակատների երեսապատում բազալտե սալիկներով 150x30մմ -12գծմ)	քմ	1,8	17,500	31,500
4	13-145 վեր	Պատերի երեսապատում բազալտե սալիկներով 2,0 սմ հաստությամբ	ք.մ.	21,4	16,75	358,450
5	7-714	Պատերի շարվածքների կարանների լցոնում ց/ավազե շաղախով	100մ	6,2	20,300	125,860
6	11-49 վեր	Պատերի շարվածքների կարանների մաքրում ավազաշիթային սարքով	քմ	930,0	0,300	279,000
7	11-78	Բազալտե երեսապատված մակերեսների հղկում	100 քմ	9,3	129,500	1204,350
8	14-317 վեր	Շարվածքի լվացում	քմ	930,0	0,050	46,500
9	6-128	Պատի կառուցում Բ15 դասի բետոնով 30,0սմ հաստությամբ (ծաղկանոցի պատերի բարձրացում)	խմ	3,30	74,900	247,170
10	1-1592	Բուսական բնահողի մշակում էքսկավատորով 0,5խ.մ տարողությամբ բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին ծաղկանոցների համար	1000 խմ	0,0111	589,200	6,540

Сканировано с CamScanner

	Շ310-3	Բուսահողի տեղափոխում 3 կմ հեռ	տ	14,43	1,600	23,088
	1-968	Բուսահողի փռում ծաղկանոցներում 20,0սմ հաստությամբ	խմ	11,10	1,100	12,210
					Ընդամենը	14380,298
					Ընդամենը%	57.06
		Ոռոգման ջրագիծ				
1	22-117	Պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում Φ25x2,3մմ PN 10	մ	68,0	0,680	46,240
2	16-134	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ 25մմ	հատ	7,0	4,550	31,850
					Ընդամենը	78,090
					Ընդամենը%	0.31
		Շվաքարան 5հատ				
1	6--83	Վրադիր էլեմենտների տեղադրում	տ	0,008	300,800	2,406
2	ինֆ.	Թիթեղ 100x100x5	քմ	0,20	34,100	6,820
3	9--51	Մետաղական սյուների մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	0,214	49,900	10,679
4	ինֆ.	խողովակ N 80 x 80 x2մմ պրոֆիլի	մ	43,0	3,300	141,900
5	9--94	Մետաղական հիմնակմախքի մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	0,342	80,700	27,599
6	ինֆ.	խողովակ N 50 x 30 x2,0 մմ պրոֆիլի	մ	139,5	1,600	223,200
7	9--94	Մետաղական կավարամածի մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	0,314	80,700	25,340
8	ինֆ.	խողովակ N 30 x 30 x1,5մմ պրոֆիլի	մ	227,5	1,040	236,600
9	12-273	Տանիքի ծածկույթի կառուցում պլաստիկ կոմինդրատիպ սալերով	100 քմ	1,0	717,500	717,500
10	ինֆ.	Դյուբել մեխ	հատ	80,00	0,080	6,400
11	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	22,0	1,450	31,900
					Ընդամենը	1430,344
					Ընդամենը%	5.68
		Ստորգետնյա հետիոտն անցում				
1	8--61 գա=0,6 գմ=0,7	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում ջրահեռացման առուների վերանորոգման համար	տ	0,164	48,400	7,938
2	46-83	Ջրահեռացման առուների քայքայված բետոնե պատի քանդում	խմ	0,8	22,650	18,120
3	6-127	Ջրընդունիչ պատի կառուցում Բ15 դասի բետոնով 20,0սմ հաստությամբ	խմ	0,80	87,600	70,080
4	15-201	Պատերի սվաղում ց/ավազե շաղախով	քմ	28,4	1,800	51,120
5	15--535	Պատերի ներկում ջրադիմացկուն ճակատային ներկով	քմ	100,2	1,280	128,256
6	7-767	Կախովի առաստաղի մետաղական կարկասի կառուցում ուղղանկյուն կտրվածքի խողովակներով	տ	0,118	133,800	15,787
7	ինֆ.	խողովակ N 30 x 30 x1,5 պրոֆիլի	մ	85,5	1,040	88,920
8	10-64	Կախովի առաստաղի կառուցում պլաստիկ շերտաերիզներով	քմ	78,2	5,000	391,000
9	8--61	Ապամոնտաժված մետաղական ճաղաշարի վերատեղադրում	տ	0,164	77,000	12,628
10	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	17,1	1,450	24,737
					Ընդամենը	808,586
					Ընդամենը%	3.21

Сканировано с CamScanner

		Ստորգետնյա հետիոտն անցման էլեկտրամատակարարում				
	21-133	Լուսատու կախովի առաստաղի «ԼԵԴ» մակնիշի	հատ	10,0	3,250	32,500
2	8-402-2	Հաղորդալար պղնձե ջիղով հատվածքը 2x2,5մմ² ՊՊՎԳ մակնիշի բազմաջիղ	100մ	0,4	60,500	24,200
3	8-402-2	Մալուխ պղնձե ջիղով հատվածքը 4x4 մմ² ՎՎԳ մակնիշի բազմաջիղ	100մ	0,3	151,530	45,459
4	8-591-2	Սենսորային անջատիչների տեղադրում	հատ	2,0	10,600	21,200
		Ընդամենը				**123,359**
		Ընդամենը %				**0.49**
		Զբոսայգու մետաղական նստարան 12 հատ				
1	6–83	Վրադիր էլեմենտների տեղադրում հատակին	տ	0,0192	300,800	5,775
2	ինֆ.	Թիթեղ 100x100x5	քմ	0,48	34,000	16,320
3	ինֆ.	Դյուբել մեխ	հատ	96,0	0,080	7,680
4	9–51	Մետաղական կանգնակների մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	0,0504	49,900	2,515
5	ինֆ.	խողովակ N 40 x 40 x2,0 մմ պրոֆիլի	մ	20,16	1,500	30,240
6	9–94	Մետաղական հիմնակմախքի (հեծաններ, ճաղեր) մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից	տ	0,1658	80,700	13,383
7	ինֆ.	խողովակ N 40 x 40 x2,0 մմ պրոֆիլի	մ	12,0	1,500	18,000
8	ինֆ.	խողովակ N 40 x 30 x1,5 մմ պրոֆիլի	մ	84,0	1,670	140,280
9	6–83	Վրադիր էլեմենտների տեղադրում նստարաններին	տ	0,0096	300,800	2,888
10	ինֆ.	Թիթեղ 100x100x5	քմ	0,48	34,000	16,320
11	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	18,3	1,450	26,601
					Ընդամենը	**280,002**
					Ընդամենը%	**1.11**
		Ջրընդունիչ հոր				
1	1-962	4-րդ կարգի գրունտի փորում ձեռքով	խմ	2,0	4,600	9,200
2	8–11	Խճի նախապատրաստական շերտի կառուցում 6,0սմ հաստությամբ	խմ	0,1	9,800	0,980
3	11–11	Հատակի կառուցում Բ 15 դասի բետոնով 15սմ հաստությամբ	խմ	0,25	49,400	12,350
4	6-126	Ջրընդունիչի պատի կառուցում Բ15 դասի բետոնով 15,0սմ հաստությամբ	խմ	0,56	109,200	61,152
5	8–61	Մետաղական ճաղաշարի մոնտաժում անկյունակներից և ամրաններից	տ	0,065	77,000	5,005
6	ինֆ.	Անկյունակ 70x70x6	մ	4,3	4,900	21,070
7	ինֆ.	Անկյունակ 50x50x4	մ	4,2	2,200	9,240
8	ինֆ	ամրան 18 AIII	կգ	22,0	0,600	13,200
9	ինֆ	ամրան 12 AIII	կգ	2,70	0,600	1,620
10	22-76	Մետաղական խողովակների տեղադրում Փ 700x6մմ	մ	8,00	94,400	755,200
11	15-613	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	18,6	1,000	18,600
					Ընդամենը	**907,617**
					Ընդամենը %	**3.60**
		Հենապատ				
1	1-962	Հիմքերի փորում ձեռքով 4-րդ կարգի գրունտներում	խմ	3,0	4,600	13,800
2	8–11	Խճի նախապատրաստական շերտի	խմ	0,1	9,800	0,980

Сканировано с CamScanner

		կառուցում				
	6-20	Հիմքերի կառուցում Բ15 դասի բետոնով	խմ	0,93	57,000	53,010
	6–90	Հենապատի կառուցում Բ 15 դասի բետոնով	խմ	2,1	58,000	121,800
5	1-1593	3-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով 0,5խ.մ տարողությամբ բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին հետադարձ լիցքի համար	1000 խմ	0,0433	757,100	32,782
6	C310-3	Գրունտի տեղափոխում 3 կմ հեռ	տ	75,78	1,620	122,756
7	1-1638	Հողի հետադարձ լիցք բուլդոզերով	խմ	43,30	0,060	2,598
					Ընդամենը	**347,726**
					Ընդամենը %	**1.38**
		Մետաղական կամար R=3,5մ 1հատ				
1	1-961	Հիմքերի փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում	խմ	0,20	2,600	0,520
2	6–1	Հիմքերի կառուցում Բ15 դասի բետոնով	խմ	0,20	48,200	9,640
3	6–82	Մետաղական կամարի մոնտաժում մետաղական խողովակներից	տ	0,0448	110,700	4,959
4	ինֆ.	Խողովակ Φ32x3մմ	մ	13,8	1,370	18,906
5	ինֆ.	Խողովակ Φ15x2,5մմ	մ	6,05	0,900	5,445
6	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	4,1	1,450	5,945
					Ընդամենը	**45,415**
					Ընդամենը %	**0.18**
		Մետաղական կամար R=2,0մ 8հատ				
1	1-961	Հիմքերի փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում	խմ	1,60	2,600	4,160
2	6–1	Հիմքերի կառուցում Բ15 դասի բետոնով	խմ	1,60	48,200	77,120
3	6–82	Մետաղական կամարի մոնտաժում մետաղական խողովակներից	տ	0,1831	110,700	20,269
4	ինֆ.	Խողովակ Φ32x3մմ	մ	50,2	1,550	77,810
5	ինֆ.	Խողովակ Φ15x2,5մմ	մ	39,6	0,900	35,640
6	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	15,1	1,450	21,895
					Ընդամենը	**236,894**
					Ընդամենը %	**0.94**
		Լուսավորության սյուներ 8հատ				
1	1-961	Հիմքերի փորում ձեռքով տեղադրման համար	խմ	0,8	4,600	3,680
2	33-53	Մետաղական պատվանդանի տեղադրում Φ=159x4,5մմ խողովակներից	տ	0,0512	846,600	43,346
3	6–1	Հիմքերի բետոնացում Բ15 դասի բետոնով	խմ	0,32	48,200	15,424
4	33-621	Դեկորատիվ մետաղական սյուների մոնտաժում լուսատուներով	հատ	8,0	730,330	5842,640
5	8–146-1	Պղնձե մալուխ բազմաջիղ ՊՎՀ 2x2,5մմ^2	100 մ	0,64	88,000	56,320
6	15-613	Մետաղական խողովակների յուղաներկում	քմ	1,005	1,000	1,005
					Ընդամենը	**5962,415**
					Ընդամենը %	**23.66**
		Աղբամաններ 6 հատ				
1	6–83	Վրադիր էլեմենտների տեղադրում հատակին	տ	0,0038	300,800	1,132

Сканировано с CamScanner

	ինֆ.	Թիթեղ 100x80x5	քմ	0,096	34,000	3,264
	ինֆ.	Դյուբել մեխ	հատ	48,0	0,080	3,840
	ՄԱՓ 2-622	Մետաղական աղբամանների մոնտաժում	հատ	6,0	7,900	47,400
5	ինֆ	թիթեղ 3մմ	քմ	3,06	19,500	59,670
6	ինֆ	խողովակ 40x20x1,5մմ	մ	9,0	1,100	9,900
7	ինֆ	խողովակ 20x20x2մմ	մ	2,1	0,800	1,680
8	ինֆ	անկյունակ 30x30x3մմ	մ	0,6	1,000	0,600
9	15-614	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	7,45	1,450	10,805
					Ընդամենը	**138,291**
					Ընդամենը %	**0.55**
						25200,000
		Ամբողջը				**100**
		Ամբողջը %				**5040,000**
		Շահույթ 20%				**30240,000**
		Ընդամենը				

* Կապալառուն աշխատանքները կատարում է Մեղրի համայնքի Մեղրի բնակավայրի Զ. Անդրանիկ փող. գտնվող Կասկադում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան

ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302199014
Հ/Հ 900302000238
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Ա.Թումանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ
Ք.Մեղրի,Գործարանային 89

Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2052122159381001
ՀՎՀՀ 09700228
Տնօրեն՝ Ա.Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Сканировано с CamScanner

Հավելված թիվ 2
«22» սեպտեմբերի 2021 թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ

«ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՍԿԱԴԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ն ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Պատերի և աստիճանավանդակների շարժվող և ջարդված երեսպատման սալիկների քանդում	Պայմանագրի կնքման օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 15 օր հետո
2	Բետոնե պատերի և թասակների քանդում	Պայմանագրի կնքման օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 20 օր հետո
3	Մետաղական լուսավորության սյուների ապամոնտաժում	Պայմանագրի կնքման օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 25 օր հետո
4	Նոր բազալտե թասակների տեղադրում	Պայմանագրի կնքման օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 85 օր հետո
5	Աստիճանների երեսպատման բազալտե սալերի տեղադրում	Պայմանագրի կնքման օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 115 օր հետո
6	Պատերի բազալտե սալիկների տեղադրում և կարանների մշակում	Պայմանագրի կնքման օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 15 օր հետո
7	Ծաղկանոցների պատերի բետոնացում	Պայմանագրի կնքման օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 130 օր հետո
8	Աճող հողի բարձում-տեղափոխում – 3 կմ և փռում ծաղկանոցներում h=20սմ	Պայմանագրի կնքման օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 150 օր հետո
9	Բարեկարգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	Պայմանագրի կնքման օրվանից 180 օր հետո
ԸՆԴԱՄԵՆԸ		**Պայմանագրի կնքման օրվանից**	**Պայմանագրի կնքման օրվանից սկսած 180 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան

ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302199014
Հ/Հ 900302000238
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Ա.Թումանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ
Ք.Մեղրի,Գործարանային 89

Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2052122159381001
ՀՎՀՀ 09700228
Տնօրեն՝ Ա.Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

Сканировано с CamScanner

«22» սեպտեմբերի 2021 թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-2022 թ թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Հունվար 2022թ.	Փետրվար 2022թ.	Մարտ 2022թ.	Ընդամենը
1	45231270	**Մեղրի քաղաքում գտնվող կասկադի կապիտալ վերանորոգման**							9 072 000	15 120 000	21 168 000	27 216 000	30 240 000	30 240 000	30 240 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան

ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900302199014
Հ/Հ 900302000238
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Ա.Թումանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ Ք.Մեղրի,Գործարանային 89

Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2052122159381001
ՀՎՀՀ 09700228
Տնօրեն՝ Ա. Գասպարյան

/ստորագրություն/ Կ.Տ

Сканировано с CamScanner